


ԼԵԽՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴ. Հ. ՍՈՆԱՆԻՏԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ
10—11-րդ դարերում**

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1940



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ:

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

АКАД. Я. А. МАНАНДЯН

ГОРОДА АРМЕНИИ В 10—11 СТОЛЕТИЯХ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

47.925)15

5-24

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ 1961 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ 10—11-րդ ԴԱՐԵՐՈՒՄ

A $\frac{\pi}{33732}$



ԱՐՄԳԱՆ - Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 4 0

Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության վերոշմամբ:

ՔԱՂԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 10—11-ԻՂ ԴԱՐԵՐՈՒՄ

10—11-րդ դարերը հայ ժողովրդի պատմական անցյալում տնտեսական և կուլտուրական մեծ ու անորինակ վերելքի շրջան էին: Այդ վերելքի հիմքը և առանցքը կազմում էին, ինչպես այժմ պարզված է, քաղաքների արագ բարգավաճումը, առևտրի ու ապրանքային տնտեսության բուռն զարգացումը և հարուստ ու ազդեցիկ առևտրական հայ բուրժուազիայի զորեղացումը:

Հովհաննես Դրասխանակերտցին տնտեսական այս վերելքի մասին գրում է.

«Իսկ այն որերում Տերը բարենաճ վերաբերվեց Հայաստան աշխարհին, պատսպարեց և աջողություն շնորհեց ամեն տեսակ բարի գործերում: Ամեն մարդ բնակվեց իր ժառանգության մեջ և, սեպհականելով իր յերկիր՝ տնկեց այգիներ և աճեցրեց ձիթենիների ու պարտեզների բուրաստաններ. հերկեցին հերկ փշերից հեռու և հավաքեցին պուտուղ հարյուրապատիկ. լիքը լցվեցին հունձը վերջանալուց հետո ցորենի ամբարները և լցվեցին այգեկութից հետո գինու հորերը. ցնծությունը տիրեց լեռներին, վորովհետև նրանց վրա շատացան արածող տավարի նախիրները և վոչխարի հոտերը: Յեվ մեր գլխավոր նախարարները, ապահովվելով և հանգստանալով տապատակների հարձակումներից՝ շինում էին մենաստաններում, ավաններում և ագարակներում քարաշեն, հաստահողոյս, կրածույլ յեկեղեցիներ»:

[«Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաուրսն յայնոսիկ այց արաբեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնակեցան իւրաքանչիւրոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան Կուրք գինւոյ ի կութս այգեստանեայց և լերինք ցըն-

ծուլթիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք ան-
դեալք արջառոց և հօտք ոչխորաց: Եւ գլխաւոր նախարարք
մեր յապահովացեալք և հանգուցեալք ի հինից ասպատա-
կաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ, հաստահեղոյս ձուլեալ կրով՝
ի մենաստանս և յաւանս և յազարակս»¹:

Վոր Բագրատունյաց Թադաւորության ժամանակաշրջանը,
իրոք, մի նոր դարաշրջան եր Հայաստանի տնտեսական ու կուլ-
տուրական մեծ զարգացման՝ այդ պարզ յերևում ե վնչ միայն հայ,
այլև ոտար աղբյուրները վկայություններէց:

Ինչպես հայտնի յս նորագույն աշխատություններէց, արա-
բական մատենագիրները Բագրատունյաց Հայաստանը համարում
էյին իրենց ամենահարուստ յերկրներէց մեկը: Տասերորդ դարի
արաբական աշխարհագիր Իբն-Ֆակիհը իր «Գիրք յերկրներէ մա-
սին» գրութեամբ մատնանշում ե, վոր միմիայն Արաքսի գետա-
հովիտում նրա ժամանակ յեղել են մոտ 1000 քաղաք ու գյուղ:²
Նմանապես և Յակուտն իր «Աշխարհագրական բառարանի» մեջ
Հայաստանում գտնվող քաղաքները ու գյուղերը քանակի մասին
տալիս և դարձյալ Հափաղանց մեծ թիվ՝ 18.000 մեծ և վոքը գյուղ-
ղաքաղաքներ³:


Արաբական հեղինակները այս և նման տեղեկությունները,
վոր թվում են խիստ Հափաղանցված՝ ճիշտ են, ըստ յերևույթին,
միայն այն Հափով, ինչ Հափով վոր նրանք համապատասխանում
են Ստեփանոս Ասողկի վկայության: Տարոնեցի այս պատմիչը,
վորը Բագրատունյաց շրջանի պատմագիր ե՝ մատնանշում ե, վոր
Սմբատ Ա-ի (890/1—913/4 թ.) և Աշոտ Ա-ի (887—890/1 թ.) ժա-
մանակ, ուրեմն, իններորդ դարի վերջերում և տասերորդ դարի
սկզբներում՝

«Հայոց աշխարհում շինուլթյուն եր և խաղաղություն, և
համաձայն մարդարեության ամեն մեկը հանգչում եր իր
վորթի ու թղենու տակ: Յեւլ այսպես իրենց բազմամարդու-
թյամբ ու ընչեղությամբ ազարակները դառել էյին աւան-
ներ և աւանները քաղաքներ. մինչևիսկ հովիվներն ու նախ-
րապանները հագնում էյին մետաքսե պատմուճաններ»:

¹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ, Պատ-
մութիւն Հայոց, Թիֆլիս 1912, էջ 198—199:

² Տէս Լորան, «Հայաստանը Բյուզանդիայի ու Իսլամի միջև» (Փրան-
սերեն), Փարիզ 1919, էջ 44:

³ Նույնը, էջ 44:



Անտիկ կաթոլիկ եկեղեցի

[«Յաւուրս սորա և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խալաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թղենեաւ: Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ ըսողմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէտրդաց մետաքսեայս զգենուլ պատմուճան»]¹:

Ասողիկի այս վկայության մեջ Հափաղանցված է, անտարա-
կույս, նրա հաղորդած տեղեկությունը նախնապանները ու հովիւ-
ների մետաքսե շորերը մասին: Մենք մատնացուցց եյինք արել
«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ոռւսերին մեր աշ-
խատության մեջ, վոր Բագրատունյաց թագավորության ժա-
մանակաշրջանում բնակչության ստորին խավերի զրությունը
վնչ միայն չէր թեթևացել, այլև խիստ ծանրացել էր: Սակայն
Ասողիկի մյուս կարևոր տեղեկությունները Հայաստանի բարգա-
վաճման և ազարակների ավանցման ու ավանների քաղաքաց-
ման մասին, ինչպես տեսնում ենք, լիովին համապատասխանում
են արաբական մատենագիրների վերոհիշյալ վկայություններին
և, ուրեմն, կարող են միանգամայն հավաստի ու վստահելի հա-
մարվել:

Ասողիկի և արաբական աղբյուրների վկայություններին
կարող ե կովան ծառայել ըստ իս նաև այն, վոր հայ մատնա-
գրական յերկերը Բագրատունյաց Հայաստանում հիշատակում
են, իրապես, մեծ թվով «գյուղաքաղաքներ» և «քաղաքագյուղեր»,
վորոնք, հավանորեն, հենց այն հին ավաններն եյին, վոր դառել
եյին քաղաքներ: Հովհաննես Դրասխանակերտցու մոտ մատնանըշ-
ված են, որինակ, հետևյալ «քաղաքագյուղերը»՝ «Արուճ», «Աւան»,
«Բագարան», «Երազգաւորք», «Երևան», «Կողբ», «Մրեն», «Բա-
րունջ», «Գառնոյ գիւղաքաղաք» ու «Թալնայ գիւղաքաղաք» են:

Դվին-Պարթավ հին ճանապարհի վրա, ինչպես մատնացուցց
եյինք արել «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» մեր
աշխատության մեջ², նաև այժմ գտնվում են հին Բերդկունքի ու

¹ «Ս տ և փ ա ն ո ս ի Տ ար օ ն ե ց լ ո յ Ա ս ո ղ կ ա ն, Պատմութիւն տիե-
զերական», Ս. Պետերբ. 1885, III, գլ. Գ, էջ 161:

² Տէս «О торговле и городах Армении в связи с мировой торгов-
лей древних времен», Эривань 1930, էջ 145:

³ Տէս էջ 185—192:

Մաքենիսի ընդարձակ ավերակները, վորոնք կոչվում են «Աղատ քաղաք»-ներ և վորոնք նշանավոր կենտրոնավայրեր են յեղև Բագրատունյաց թագավորութեան ժամանակաշրջանում:

Հալանորեն, թե այս «Աղատ քաղաք»-ները և թե Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշատակված վերոհիշյալ «Ղիւղաքաղաք»-ները հենց այն «քաղաքացեալ աւան»-ներն են, վոր հիշված են նաև Ասողիկի մոտ:

Հայաստանի բարգաւաճ վիճակը և քաղաքային կյանքի զարգացումը Բագրատունյաց շրջանում, 10—11-րդ դարերում, ինչպես տեսնում ենք, միանգամայն անժխտելի յե և հաստատվում և մատենագրական բազմաթիվ վկայութեաններով:

*
* * *

Արդ՝ ինչո՞վ պետք և բացատրել այդ արտակարգ բարգաւաճումը 10—11-րդ դարերում:

Մեր նախորդ աշխատութեաններէց մեկում մենք արդեն մատնացույց կ'իյնք արեւել, վոր արարական տիրապետութեան սկզբնական շրջանում, 7—8-րդ դարերում, Հայաստանի տնտեսական կյանքը յետ եր մղվել իր առաջավոր գիւղերէից և զարգանում եր բնական տնտեսութեան հետագարձ հիմքերի վրա:

Ոմեկանների և առաջին Աբբասյանների ժամանակ Արեւելքի առևտուրը Բյուզանդիայի հետ գրեթե անհնարին եր դառել շնորհիվ բյուզանդա-արաբական պարբերաբար կրկնվող համառ պատերազմների:

Այս դրութեանը հետզհետե փոխվեց, սկսած իններորդ դարից և, գլխավորապես, 10—11-րդ դարերում:

Արարական խալիֆայութեան աստիճանական թուլացման և Բյուզանդական կայսրութեան զորեղացման պատճառով Բագրատունյաց Հայաստանի քաղաքական ու տնտեսական զարգացման համար անսպասելի կերպով ստեղծվեցին այդ ժամանակ բացառիկ նպաստավոր պայմաններ: Իններորդ դարի վերջերին Շիրակի Բագրատունիները, վորոնք դառել էին արարական խալիֆայութեանը յենթակա, սակայն ինքնիշխան թագավորներ՝ աշխատեցին չեղք մնալ ու չմասնակցել բյուզանդա-արաբական կռիւներին: Նրանց յերկիրը, վորը Թեոդոսոպոլիսի ու Արտանուշի վրայով հաղորդակցութեան ունէր Տրապիզոնի և բյուզանդական այլ նավահանգիստների հետ՝ վնչ միայն մեծ նշանակութեան ստացավ

¹ Տես «О торговле и городах Армении» էջ 133—140:

ժերն համաշխարհային առևտրի տրանզիտային ճանապարհ, այլև
դառա՛վ տնտեսական իդեալական բուժքեր յերկիր և չնդեր վայր
միջազգային առևտրի:

Ռուս գիտնական Գուբկո-Կրյաժինը, վերը մատնացույց և
արել կարևոր այս վրաստը՝ Բազրատունյաց Հայաստանի առև-
տըրական դերը համարում և բացատրիկ ու արտակարգ այն պատ-
ճառով, Վոր այս ժամանակաշրջանում բոլորովին ընդհատված էյին
համաշխարհային առևտրական հարաբերությունները Ասորիքի ու
Փոքր Ասիայի վրայով:

Պոստական Տավրոսից սկսած մինչև Միջերկրական ծովը,
ասում և Գուբկո-Կրյաժինը¹, մոտ 600 կիլոմետր յերկարությամբ
և 300 կիլոմետր լայնությամբ տարածվում եր սահմանային լայն
գիծը, վորը յերկու կողմից ևլ ծածկված եր ամբություններով և
բյուզանդական ստրատիոնների ու մուսուլմանական զաղինների
զորական բնակավայրերով, վորոնք դարերի ընթացքում վարում
էյին սահմանային կռիվներ: Աշխարհագրական այս պայմաննե-
րում Բազրատունյաց Հայաստանը դառել եր, բնակա՛նաբար, դըլ-
խավոր ու միակ արանզիտային ճանապարհը և միակ հարմար ու
ապահով վայրը համաշխարհային առևտրի:

Բազրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ
առևտրի վերակենդանացմանը պետք և վերագրել, անշուշտ, թե
**հայկական համայնությունը ամբողջական վիճակը և թե հոյակապ բա-
զրատունիները և իրենց ու իրենց բնակավայրերը և իրենց բնակավայրերը և իրենց
համաշխարհային**



Տնտեսական այս վերելքի շրջանում, տասերորդ դարում, հիմ-
նըվել են Հայաստանում, խալիֆայությունից Դվլեհի վրայով
Տրապիզոն տանող տարանցիկ ճանապարհի մոտ՝ Անին, Կարսը և
Արծնը, վորոնք ամենակարճ ժամանակում դառան խաչոր ու վար-
թամ քաղաքներ:

Անին, վորը հայ մատենագրության մեջ 10-րդ դարից առաջ
հիշատակված և վորպես ամբողջ՝ շուտով հայտնի յեղավ իբրև տիե-
զերահռչակ մեծ քաղաք: Աշոտ Վոլորմածի ժամանակ՝ 953 թվին,
նա դառավ գահանիստ կենտրոն ու Շիրակի թագավորության
մայրաքաղաք: Նրա ընդարձակ պատմությունը և պեղումների մի-

¹ См. В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской
Армении, «Новый Восток», Москва 1927, кн. 16—17, к. 205—206:

ջոցով հայտարարված հնությունների մանրամասն նկարագրութ-
յունը տվել են ակադեմիկներ Ն. Մառը և Հ. Որբելին¹:

Անիից Արծն և Արտանուջ տանող ճանապարհի վրա գտնվում
էր Կարաբ, վորը նախ քան տասերորդ դարը հիշվում է նույնպես
վորպես ամրոց՝ «ամուրն Կարուց», «Կարուց բերդն»: Սրա արագ
աճումը և վերածվելը տասերորդ դարում խոշոր քաղաքի կապ ու-
նե՞ր դարձյալ արանդիտային ու միջազգային մեծ առևտրի դար-
գացման հետ: Աշոտ Յերկաթի յեղբայրը և հաջորդը՝ Աբաս Ա-ը
(928—953), ի նկատի ունենալով Կարսի ռազմական ամուր դեր-
քը՝ նրան դարձրեց իր թագավորության աթոռանիստ կենտրոնը:
Իսկ Աբաս Ա-ի մահից հետո՝ նրա վորդին Մուշկը չճանաչեց իր
մեծ յեղբոր՝ Անիի թագավոր Աշոտ Վոդորամծի իշխանությունը
և իր կուսակիցների կողմից ինքը ևս կարգվեց Կարսի մեջ թա-
գավոր: Յե՞վ այսպիսով սկիզբ դրվեց Կարսի կամ Վանանդի թա-
գավորության: Նկարագրելով այս քաղաքի ավերումը Սեյմուհյան
արշավանքների ժամանակ՝ 11-րդ դարի հայ մատենագիր Արիս-
տակես Լաստիվերտյանի վկայում է, վոր նա հարստացել էր «բա-
զում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»²: Լաստի-
վերտյուռ այս խոսքերը, ինչպես տեսնում ենք, պարզ կերպով ցույց
են տալիս, վոր Կարսի հարստացման աղբյուրը յեղել է ծովային
ու ցամաքային առևտուրը:

Կարսից միջազգային առևտրի տարանցիկ ճանապարհը գնում
էր Թեոդոսուպոլիս մոտ գտնվող Արծն քաղաքը, վորը նույն-
պես հիշվում էր: **Արծն քաղաքը** **Արտանուջի և Կարսի միջև**
գտնվում է: Վոր Արծն քաղաքը

**«հոյակապ էր ու հայտնի յեր բոլոր յերկրներում, իրոն
մի քաղաք վոր լեռան վրա յե, և ծովը և ցամաքը յերկ-
նում ելին և առատաձեռն կրում ելին սրան իրենց կարո-
ղությունը»:**

[«Որ հոյակապ և ակնառու էր ամենայն աշխարհաց,
իբրև դժադա՞ որ ի վերայ լեռինն կայցէ. և ծով և ցամաք
երկնէր և առատանայր կրել ի սմա զգօրութիւն իւր»³:

Ինչպես մատնացույց է արել ֆրանսական պատմագետ Լո-

¹ Տես Н. Я. Марр, Ани, Ленинград 1934 և Հ. Որբելի, Անվո
ակերակները, Թրգմ. ուսերհնից, Վարդաշապատ 1911:

² Տես «Պատմութիւն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտյոյ», Թիֆ-
լիս 1912, գլ. ԺԵ, էջ 91:

³ Տես նույնը, գլ. ԺԲ, էջ 78:

րանը¹, Արծն քաղաքը հիշատակված և նաև բյուզանդական մատենագիրներ Ատտալիատեսի և Կեղրենոսի հետևյալ վկայությոաներով:

1. Միքայել Ատտալիատես, Պատմություն, Բոնն 1853, էջ 148²

«Թեոդոսուպոլիսը թողնված էր ու լքված տարիներ առաջ և գերազասություն էր տրված լավ գիրք ունեցող հարևան Արծն քաղաքին, ուր ծավալվել էր մեծ անսլարիսպ այդ քաղաքը և ուր վաճառվում էյին այն ամենը, ինչ վոր արտադրում էյին Պարսկաստանը, Հնդկաստանը և Ասիայի մյուս յերկրները»:

2. Կեղրենոս, Ժամանակագրություն, Բոնն 1838, II, էջ 577³

«Սա [Արծնը] անսլարիսպ քաղաք է, բաղմամարդ և խիստ հարուստ: Այստեղ բնակվում էյին տեղական վաճառականներ և նաև մեծ թվով ասորիներ, հայեր և ուրիշ ժողովուրդներ: Վորովհետև սրանք շատ էյին թվով, ուստի և անհրաժեշտ չէյին համարում աղբիկ պարիսպների յետև, չնայած վոր մոտ էր Թեոդոսուպոլիսը, վորը մեծ ու հզոր քաղաք էր և ուներ անառիկ շրջապարիսպ»:

Ինչպես տեսնում ենք, նաև Արծն քաղաքի միջադպրիս տեստրական կենտրոն լինելը պարզ յերևում և մեջ բերված վկայություններից:

Կարս քաղաքից մի այլ գիծ գնում էր Արտանուջի վրայով դեպի Սև ծովի արևելյան նավահանգիստները: Առևտրական այս ճանապարհագծի վրա խոշոր ու հարուստ քաղաք էր դառել Արտանուջը, ուր ութերորդ դարի վերջում հաստատվել էր Բագրատունիների Կյարջքի ճյուղը, վորն իններորդ դարում հիմնադիր յեղավ նոր հարստության Վրաստանում: Արտանուջի առևտրական մեծ դերը մատնացույց և արել բյուզանդական Կոստանդին Ծիրանածին կայսրը (913—959) իր «Պետության կառավարման մասին» գրվածքում (գլ. 46)²:

«Վաճառականները,—ասում և նա,—գալիս են այստեղ Տրապիզոնից, Վրաստանից, Աբխազիայից և բոլոր կողմերից: Այդ վաճառականներից ստացվում է բավական մեծ մաքս»:

¹ «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև», Փարիզ 1919, էջ 44, ծան. 1:

² De administrando imperio, ed. Bonn, էջ 208:

Բացի Անիից, Կարսից, Արծնից և Արտանուշից, վորոնք ամենակարճ ժամանակում զարգացել ու դառել էին շքեղ ու փարթամ քաղաքներ, 10—11-րդ դարերում զորեղացի ու հալապուցի էին նաև Հայաստանի նախկին քաղաքները՝ Դվինը, Վաղարշապատը, Վանը, Արճեշը, Սլավը և մյուս կենտրոնները:

Քաղաքների ու քաղաքային կյանքի արտակարգ մեծ զարգացումը 10—11-րդ դարերում, վոր հետևանք էր միջազգային առևտրի բուռն վերակենդանացման, ինչպես տեսնում ենք, դարձյալ ակներև ու ցայտուն կերպով ցույց է տալիս, վոր Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանը տնտեսական մեծ վերելքի մի շրջան էր:


*
* * *

Բագրատունյաց Հայաստանի բուռն այս վերելքը պայմանավորված էր, անտարակույս, նաև նրանով, վոր Հայաստանը, 10-րդ դարի յերկրորդ քառորդից սկսած, ավելի քան մեկ դար, գրեթե չենթարկվեց հարձակումների ու ավերածությունների և ապրեց խաղաղ ու հանդիստ մինչև 11-րդ դարի քառասնական թվականները՝ մինչև Սելջուկյան արշավանքները:

Քաղաքական անդորրության և տնտեսական բարգավաճման բարենպաստ պայմաններում ցայտուն կերպով արտահայտվեցին հայ ժողովրդի ստեղծագործական մեծ ընդունակությունները կուլտուրական շինարարության ու զարգացման բոլոր ասպարեզներում՝ զբաղանդության ու գիտության, արվեստի ու արհեստների և, մասնավոր, ճարտարապետության մեջ:

Նյութական հարստությունների անընդհատ աճումը և դրամական մեծ միջոցների կուտակումը իշխանական տոհմերի, խոշոր առևտրականների և յեկեղեցու ձեռին արտակարգ նպաստավոր պայմաններ ստեղծեցին համատարած շինարարության համար: Թագավորները, խոշոր ֆեոդալները և հարուստ առևտրականները մրցում էին իրար հետ և, աշխատելով իրար գերազանցել՝ կառուցում էին շքեղ ու ճոխ յեկեղեցիներ, պալատներ ու այլ շենքեր:

Անշուշտ, հսկայական միջոցներ էին հարկավոր կառուցելու համար ճարտարապետական այնպիսի զուլխործոցներ, ինչպիսիք են Բագրատունիների յերկհարկանի պալատն Անիում, Անիի հոյակապ կաթողիկեն, Հովիվի յեռահարկ յեկեղեցին, ինչպես և գեղեցիկ ու փարթամ մյուս շենքերը, վորոնց ավերակները պահպանվել են Անիում, Կարսում և այլ տեղերում:



Անիի պարիսպները

10—11-րդ դարերում, Սելջուկյան արշավանքներից առաջ, շինարարութիւնը խիստ զարգացել ու մեծ չափերի յեր հասել վեջ միայն Անիի, Կարսի և Լոռիի Բագրատունյաց թագաւորութիւններում, այլև Վասպուրականում, Սյունիքում, Տարոնում և Հայաստանի մյուս շրջաններում:

Բացի յեկեղեցիներից ու ապարանքներից այս ժամանակ կառուցվել են հոյակապ ու ընդարձակ քաղաքային պարիսպներ, ինչպես, որինակ, Աշոտ Վոդորմածի (953—977 թ.) և նրա վորդու Սմբատ Բ-ի (977—989 թ.) կառուցած Անիի պարիսպները, քարե մեծ կամուրջներ, որինակ, հսկայական մեծ կամուրջներն Ախուրյան գետի վրա, վորոնք զարմանք են պատճառում այժմյան ճարտարապետներին, կռու ու ամուր բերդեր, ջրմուղներ, իջևաններ և զանազան այլ շինքեր: Հատուկ ուշադրութեան արժանի յեն զանազան տիպի ջրմուղները: Նիկ. Մառի 1910 թվին Անիում կատարած պեղումներից հայտնի յե, վոր այստեղ կալե խողովակները ջրի ուժեղ ճնշումից ապահովելու համար ամփոփված են

յեղեղ լալ շինված ու միմյանց պինդ հագցրած քարե խողովակների մեջ:

Գաղափար տալու համար, թե ինչպիսի մեծ ծավալ ու շքեղ բնույթ է ունեցել 10—11-րդ դարերի շինարարությունը՝ ավելորդ է համարում հակիրճ կերպով մեջ բերել թուփա Արծրունու վկայություններն Աղթամարի շինության մասին տասերորդ դարի սկզբներում:

«Գաղիկ Արծրունին»,—պատմում է թուփա Արծրունին,—հրաման տվեց բազմաթիվ արհեստավորների ու անթիվ մարդկանց, վոր նրանք կտրեն ծանր ու դժվարակիր վեճ քարեր և գցեն ծովի անհնարին խոր հատակը: Յեւ վորոշ ժամանակիւ ընթացքում, շնորհիւ մեծ արքայի հանձն առած ջանքերի՝ հանկարծակի քարահատակ ամբարտակը վեր յեղալ ու կանգնեց, բարձրանալով հինգ կանգուն ծովի յերեսի վրա: ...Նրա վրա նա շուրջանակի կառուցեց լարածգուլթյամբ պարիսպը մոտ հինգ ասպարեզ տարածությամբ: Յեւ պարիսպն եր հրաշակերտ, անկողակերպ, զարդարված եր բարձրաբերձ լայնանիստ բուրգերով ու բարձր աշտարակներով և ուներ իր մեջ անկյունավոր, խորանանման, տախտակաձև հանդստանալու գահույքներ, ուր իր վորդիների ու ազատակույտ զորքերի հետ միշտ ուրախանում եր արքան: Իսկ պարսպի ծայրերը նա տարավ քարանձավի դժվարամած կիրճերը և սերտ կերպով միացրեց իրար: Ծովի խորահատակ հիմքերի բերանին նա գրեց անավորատես, հաստահեղույտ, բևեռապինդ գոներ, և այսպիսով, ծովի մի մասն առնելով կղզու կողմը՝ նա հրաշալիք գործեց և ստեղծեց նավերի բազմության համար խաղաղ ու ապահով նավահանգիստ»:

[«Հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմն ծանուեսն և դժուարակիրս հոսել ընկնիւուլ յատակս ծովուն անհնարին խորութիւնան. և ժամանակաւ ինչ այսպէս ջան յանձին կալեալ մեծի արքային՝ և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայտակն ամբարտակ կանդունս հինգ ի վերայ բարձրացեալ մկանաց ծովուն, ...յորոյ վերայ լար եղեալ ձգէ զպարիսպն շուրջանակի իրր ձիարշաւանօք հինգ և պարիսպն է հրաշակերտ, անկողակերպ, բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկունաւոր խորանանման

տախտակաձև յինքեան ունելով դահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդւովք՝ և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայ: Իսկ և զգլուխս պարսպին՝ ածեալ ի կիրճս դժուարամածս քարանձաւին՝ ի համրոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն գնէ դրունս ահաւորատեսս, հաստահողոյսս, բեւեալինդս. որով և զմասն ինչ ծովուն և կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յարինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ»¹:

Այնուհետեւ, ինչպես վկայում և թովմա Արծրունին, Գաղիկ թագաւորը կատարում է իր մոտ հաւաքւած իշխանների, աղանւականութեան, հոգեւորականութեան ու ռամիկների խնդիրը և թույլ է տալիս, վոր այդ տեղում, վորը լինելու յեր իրրեւ ազատտանի վայր հարձակւող թշնամիներից՝ նրանք կառուցեն շինութիւններ ու ձեռակերտներ: Յեւ հինգ տարւա ընթացքում արագ կերպով քաղաքը շինվում է և պայծառանում:

Առանձնապես հետաքրքրական է թովմայի մոտ նաեւ թագաւորական քառանկյունի պալատի կառուցման նկարագրութիւնը:

«Յեւ վորովհետեւ արքունիքում հաւաքվել էյին,— պատմում է թովման,— բաղմաթիւ արհեստավորներ, պատվաւոր մարդիկ, ժողովւած յերկրի ամեն ազգերից, վորոնք կարող էյին անել արքայի ուզածը և զործը կատարում էյին իսկույն համաձայն հրամանի՝ թագաւորը հրամայեց նրանցից մի վոմն ճարտարապետի, իմաստուն և հանճարեղ անձի, շինել քառանկյունի պալատ, վորի լայնութեան ու յերկարութեան չափը քառասուն կանգուն էր, նույնքան էր և բարձրութիւնը: Սրա վորմերի լայնութիւնն ունէր յերեք մեծաքայլ չափ տարածութիւն, և նրանք անսպալ կրի ու քարի զանգված էյին, վոր իրար էյին խառնւած ինչպես կապարի ու պղնձի ձուլւածքը: Յեւ պալատի շինութիւնը հիմքից մինչև ողի մեջ կախւած նրա գլուխը մնում էր հաստատուն առանց սյուների. և այս, իրավի, մտքից վեր է ու արժանի յե զարմանքի: Պալատն ունէր և կամարակից խորաններ ու անկյուններ և զեղապաճույճ

¹ «Թովմայի վարդապետի Արծրունեոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ 1887, IV, գլ. է, հջ 293—294:

շրջապատեր, վորոնք մտքի համար անթվարկելի եյին և աչքերի համար անզննելի: Նա ունէր նաև յերկնքի պես բարձր, վտակեղարդ և լուսաճաճանչ գմբեթներ, վորոնց յեթի մեկը ուղեհար նայել, թագավորին իբր պատիւ՝ անելով՝ նախ պետք և խուլլը գլխից հանել և ապա, տանջելով վիզը հազիվ կըկարողանար նշմարել զանազան ներկերով նկարված պատկերները»:

[«Եւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւոր բաղումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և զործն առնոյր զկատարումն՝ ումմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն, 10 կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն, որոյ որմոյն լայնութիւնն երկւք մեծաքայլութեամբ հափով ունի զպարզութեան, զուղ անապակ կրոց և քարի, իբրև գհալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ. և շինուած տաճարին ի հիմանց անախ մինչև ցլլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արգարև արժանի զարմատայլ ի վեր քան զմիտս: Ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անզննելի աչաց. ունի և գումբէթս երկնահարթս ոսկեղարդս և լուսաճաճանչս, յոր թէ նայել ոք կամեցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով՝ նախ ի բաց առցէ զխոյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն հազիւ թէ նշմարել կարեցէ զզանազան գեղոցն կերպագրութիւնս»]¹:

Թովմա Արծրունին, այս հոյակապ պալատի զարմանալի վորմնանկարները և յերկրացիկ ու գեղեցիկ դռները նկարադրելուց հետո՝ կարեւոր տեղեկություն և հաղորդում պալատի շինութեան համար գործադրված յերկաթի քանակի մասին:

«Պատմեց մեզ,—ասում և նա,—քաղաքի գործավարնէրից վատահելի մի վերակացու, վոր պալատի շինութեան վրա բանեցվել և 200.000 լիտր յերկաթ. և նա հաւանորեն ու ճշմարտապէս ավելի շուտ պակաս և ատել, քան թէ առա-

¹ Տե՛ս նոյնը, IV, գլ. է, ԿՂ 295:

տուլթյամբ ավելացրել և ու բաղմատակել: Իսկ փառաց պա-
լատի դերքը քաղաքի մեջ յերևում եր վերսկս մի մեծ բլուր
գավառի բոլոր կողմերից: Նա իր բարձրությամբ ավելի ցած
չեր քան կղզու ծայրում գտնվող քարանձավը:

Անմերձենալի ամբողթյուններով թագավորը պարսպել
եր նաև ամրոցի ծայրերը և շինել եր նրա մեջ մեծամեծ
շտեմարաններ և համարանոցներ, նմանապես և գանձատներ
և անհուն ու բաղմաքանակ զենքերի ու ձիու զարդերի հա-
մար պահեստներ»:

[«Պատմաց մեղ և հաւատարիմ օտարիկան մի ի գործա-
վարաց քաղաքին, եթէ հմուտ ի շինուած տաճարին երկաթ
լտերս իրը և ՄՌ. և հաւատապէս ճշմարտութեամբ նուագեաց
զասէն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բաղումս. իսկ
և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց գաւառին ի
մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի բլուր. ոչինչ նուագեալ
բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կղզոյն:

Պարսպէ անմերձենալի ամբողթեամբ և զծայրս ամբո-
ցին, և շինեալ ի նմա շտեմարանս մեծամեծս և համբարա-
նոցս, միանգամայն և տունս գանձուց և զինուց և ասպա-
զինաց անհուն բաղմութեանց»]¹:

Հարուստ ու հոյակապ այս շինարարությունը և ճարտարա-
պետության ու արվեստների մեծ զարգացումը, վոր մատնանշված
են Թովմա Արծրունու մոտ, ընդհանուր ու համատարած յերևույթ
եյին վերածնվող Հայաստանի բոլոր շրջաններում:

Ուշադրով են մեջ բերված վիպությունների մեջ վնչ միայն
արվեստի ու ճարտարապետության, այլ և շինարարական տեխնի-
կայի վերաբերող տեղեկությունները: Թովմա Արծրունու մատնա-
նշած կապարի ու պղնձի ձուլվածքի նման պինդ կրաքարային
վորմածքը, քառանկյունի հսկայական պալատը, վոր կառուցված
եր առանց սյուների, և այդ պալատի վրա բանեցված 200.000
լիտր կամ մոտ 5000 փութ² յերկաթը՝ կարևոր ցուցումներ են,
անշուշտ, վոր կարոտ են դեռ ուշադիր քննության համապատաս-
խան մասնագետներին կողմից:

¹ Տես նույնը, IV, գլ. Է, եջ 296:

² Լիտրը Թովմայի վիպության մեջ, հավանորեն, Իրաքի լիտրն է, վորը
հավասար եր 408 գրամին:



Աղթամարի յիկեղեցին

*
* * *

Շքեղ ու հարուստ շինարարութեան գլխավոր կենտրոններն էին 10—11-րդ դարերում, առավելապես, Հայաստանի վերահիշյալ մեծ քաղաքները և հայկական մանր իշխանութիւնների նստավայրերը։ Սակայն այդ պատմական վայրերում գտնվող հուշարձաններն ու նյութական կուլտուրայի մնացորդները, դժբախտաբար, բավարարաչափ դեռ չեն ուսումնասիրված։ Բացառութիւնն են կազմում միմիայն Անին ու նրա հիշատակարանները, վորոնք շնորհիվ ակագեմ. Նիկ. Մառի գիտական լուրջ ու յերկարատե աշ-

խառանքներին ուսուցնասիրված են և մեզ գաղափար են տալիս թե Բագրատունյաց գարաշըջանի քաղաքների և թե, ընդհանրապես, միջնադարյան հայ կուլտուրայի ու ներքին կենցաղի մասին:

Արդ՝ ամենից առաջ, պետք և պարզել, թե ինչ էյին ներկայացնում հենց իրենք՝ Բագրատունյաց շրջանի քաղաքները:

Հիմնվելով Ն. Մառի և Թ. Թորամանյանի Անիում կատարած յերկարամյա հնազոտական հետախուզումների վրա՝ դժվար չէ, իմ կարծիքով, համոզվել, վոր Անին ու Բագրատունյաց Հայաստանի մյուս մեծ քաղաքները շատ քիչ էյին տարբերվում Առաջավոր ու Միջին Ասիայի ժամանակակից քաղաքներից:

Պարսկաստանի ու Միջին Ասիայի մեծ քաղաքները, ինչպես յերեւում և ակազեմ. Բարտոլի հաղորդած տեղեկություններից¹, բաղկացած էյին յերեք մասերից, վոր անվանվում էյին «կուխն-դուզ», «շահրիստան» և «նարադ»: «Շահրիստան»-ը, վորը շրջապատված էր հատուկ պարիսպով՝ քաղաքների ներքին մասն էր, և կարելի չէ ասել, վոր նա հենց բուն քաղաքն էր: Նրա կենտրոնում, մայր մզկիթի շուրջը, գետեղված էյին մեծ շուկաները, և նրա մեջ էր գտնվում նաև «կուխնդուզ»-ը՝ քաղաքի միջնաբերդը կամ ամրոցը: «Շահրիստան»-ին կից և նրա պարիսպներից դուրս գտնվում էյին քաղաքի արվարձանները՝ «նարադ»-ը, վորը համարվում էր նույնպես քաղաքի մասը և հաճախ շրջապատված էր, ինչպես և «շահրիստան»-ը, հատուկ պարիսպներով: «Շահրիստան»-ում ապրում էյին ազնվականությունը և իշխող դասերը, իսկ «նարադ»-ում, գլխավորապես, աշխատավոր ռամիկ բնակչությունը, վորի մեջ մեծ թիվ էյին կազմում հողից զրկված ու քաղաք գաղթած չքավոր գյուղացիները: «Ռարադ»-ը ևս ուներ իր շուկաները և նրա մեջ էյին գտնվում, մեծ մասամբ, նաև արհեստավորական առանձին թաղերը:

Բագրատունյաց թագավորության նշանավոր Անի քաղաքը, ինչպես հայտնի չէ, իր ավերակներում պահպանել և հայկական մեծ քաղաքի բնույթին ու կերպարանքը: Յեւ դժվար չէ ըստ իս պարզել ու վորոշել, վոր նա ըստ իր հատակագծի միանգամայն համապատասխանում և արեւելյան վերոհիշյալ յերկրների քաղաքներին: Պարսպների մեջ գտնվող նրա ներքին մասը, վոր մանրամասն ուսուցնասիրել և ակազեմ. նիկ. Մառը պարզապես Անիի «շահրիստան»-ն է, վորն Արխատկես Լաստի-

¹ См. В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб 1903, № 8, 9, 29, 35 ևն.

վերոցու պատմութեան մեջ անվանված և «շահաստան»¹: Սրա մեջ էլին գտնվում Անիի միջնաբերդը և Բագրատունիների յերկհարկանի ապարանքը, վորոնք համապատասխանում են Պարսկաստանի ու Միջին Ասիայի «կուխնդուզ» անվանվող ամրոցներին: Պարսկաստան Անին, վորի տարածութունն ընդամենը մոտ 170 հեկտար և, ինչպես շատ ճիշտ նկատել և թորամանյանը², հաղիվ կարող եր բավականապես Բագրատունիների ընտանիքին, ազնվ-վականութեանը, պաշտոնեութեանը և բարձրաստիճան յեկեղեցա-կաններին: Ուստի և, նրա կարծիքով, մեծագույն մասն Անի քա-չաքի, վորի մեջ բնակվում եր հասարակ ժողովրդի բազմութունը, պետք և յենթադրել պարիսպներից դուրս շրջակա արվարձաննե-րում:

«Անիի պարիսպի հիւսիսային կողմը տարածուած ըն-դարձակ դաշտավայրին մէջ, —ասում և թորամանյանը, —քրն-նական պտոյտ մը շատ բան կը բացատրէ պարիսպէն դուրս ապրող ժողովուրդի կեանքին և դիրքին վրայ: Աւագ դռ-նէն մօտաւորապէս կէս քիլօմէթը հեռու դէպի հիւսիս մեծ բաղնիքի մը կլիսականդուն մնացորդը, մէկ քիլօմէթը աւելի անդին հովիւի կկեղեցին, անկէց աւելի հեռուն դէպի հիւ-սիս դարձեալ կ'ուրիշ մատուռի ու անոր կից գեղեցիկ մահարձանի մը մնացորդները պատահական կերպով աննպա-տակ չէին շինուած: Եթէ մօտավորապէս մէկ ու կէս քիլո-մէթը դէպի հիւսիս կարելի է այսպէս բնակութեանց մա-տուռներու ու դամբարաններու մնացորդներ տեսնել. նոյն բաները կարելի է տեսնել նաև դէպի արեւելք, շատ քիչ ընդ-հատուկներով մինչև Հոռոմոսի վանքը, և դէպի արեւմուտք մինչև Անի գիւղի արեւմտեան սահմանները»³:

Մատնանշելով և ուրիշ հիշատակարանների մնացորդներ Անիի շրջակայքում⁴ թորամանյանը յենթադրում և, վոր

«պարիսպներէն դուրս էր բուն Անի քաղաքը և պա-րիսպը քաղաքին ամրոցն էր»⁵:

¹ Տե՛ս գլ. Ժ, էջ 63. հմտե նաև «Մելիտինէ շահաստան», Լ ա ս տ ի վ. գլ. ԻԱ, «շահաստան Բռնավէժ», «շահաստան Նիւշապուհ», Դ ա ղ ա ր Փ ա ռ պ ե ց ի, II, 48 և III, 68, «շահաստան Բաղէշ», «շահաստան Դուին», Թ ո վ մ ա Ա թ ժ ր ու ն ի (Ս. Պետերբ. 1887), II, 6, էջ 110 և III, 22, էջ 230, հն:

² Տե՛ս նրա հոդվածը՝ «Անի քաղաք թե՛ ամրոց», Ազգագրական Հանդես, XXII, № 1, Թիֆլիս 1912, էջ 66:

³ Տե՛ս նույնը, էջ 68:

⁴ Նույնը, էջ 70:

Թորամանյանի այս յենթադրուածութիւններէց ճիշտ չեւ, իհարկեւ, նրա կռահումը, վոր իբր թե Անիի պարսպապատ մասը քաղաքի ամրոցն եր: Այդ մասը, իրապեւ, ինչպեւ տեսանք, «շահաւորատան» եր կամ «շահաստան»-ը, վորի հարավայլին անկշռնում գտնվում եր բարձր տեղում Անիի միջնաբերդը կամ ամրոցը:

Սակայն միանգամայն ուղիղ եւ համոզիչ Թորամանյանի հիմնական յեղրակացութիւնը: Անի քաղաքի մեծագոյն մասը, ինչպեւ փաստական տվյալներով ցույց եւ տրված Թորամանյանի հոգւածում, կազմել են ակներեւաբար ընդարձակ ավերակներն Անիի արվարձաններում, վորոնք, ինչպեւ տեսանք, միջնադարյան արեւելյան քաղաքների կարեոր մասն եյին եւ անվանվում եյին «ուարադ»:

*
* *


Անիի մասին կարեոր այս յեղրակացութիւնը բոլորովին նոր լույս եւ սփռում Բագրատունյաց Հայաստանի մեծ քաղաքների տարածութեան եւ ազդարնակութեան թվի վիճակի խնդիրների վրա:

Արաբական մատենագիրները հաղորդում են, վոր Առաջավոր ու Միջին Ասիայի քաղաքները, որինսկ՝ Մերվը, Ռեյը, Պարտավը եւ ուրիշները՝ ունեյին ավելի քան մեկ փարսախ կամ մոտ 6 կիլոմետր յերկարութիւն ու նույնքան լայնութիւն եւ գրավում եյին մոտ 40 քառակուսի կիլոմետր տարածութիւն, այսինքն՝ մոտ 4000 հեկտար: Միանգամայն հաւանական եւ, իմ կարծիքով, վոր նույն տիպի եւ մոտավորապեւ նույն մեծութեան քաղաքներ եյին նաեւ Անին եւ 10—11-րդ դարերի հայկական մյուս մեծ քաղաքները: Այս վերջինների մակերեսը վորոշելիս անհրաժեշտ եւ, իհարկեւ, ի նկատի ունենալ վնչ միայն նրանց պարսպապատ «շահաստան» մասը, վորն Անիում ընդամենը կազմում եւ մոտ 170 հեկտար, այլեւ նրանց արվարձանները:

Յեւ յեթե ճիշտ են մեր այս դիտողութիւնները, ինձ թվում եւ, կարող ենք նաեւ փաստորեն յեղրակացնել, վոր Բագրատունյաց շրջանի խոշոր ու նշանավոր քաղաքներն իրենց ընակշռութեան քանակով շատ ավելի մեծ են յեղել քան միջնադարյան յեւրոպական քաղաքները, վորոնք առ առավելն ունեցել են 25.000 բնակիչ, իսկ, ընդհանուր առմամբ, ավելի եւս պակաս¹:

¹ См. Карл Бюхер, Возникновение народного хозяйства, выпуск второй, СПб 1907, № 131.

Անիի Բերդը



Դվինի, Անիի ու Արծնի բնակչութեան թվի մասին մատենագրական աղբյուրների մեջ կան, մեծ մասամբ, անուղղակի վկայութեաններ: Թովմա Արծրունին, որինակ, նկարագրելով 893 թվի Դվինի մեծ յերկրաշարժը՝ վկայում է, վոր այդ յերկրաշարժի ժամանակ Դվինում մահացել էին ավելի քան 70.000 մարդ¹: Բյուզանդական պատմագիր Կեդրենոսը հաղորդում է, վոր Սելջուկյան 1049 թվի արշավանքի ժամանակ ավերված ու հրդեհված Արծն քաղաքում սպանվել ու աչրվել էին մոտ 140.000 բնակիչ²: Անի քաղաքի մեջ, պատմիչների ասելով, հաշվում էր 10.000 տուն և 100.000 բնակիչ³:

Մեջ բերված այս կտր թվերը կարող են, իհարկե, համարվել վիճելի ու անհավաստի: Սակայն ի նկատի առնելով Անիի և մյուս մեծ քաղաքների բնդարձակ արվարձանները, ինձ թվում է, կարող ենք վստահորեն յենթադրել, վոր Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքներն ունեցել են, հավանորեն, ավելի քան 50.000 և նույնիսկ մինչև 100.000 բնակիչ:

Քաղաքների բնակչութեան իրավական դրութեան մասին մենք գրեթե չունենք տեղեկութեաններ: Մատենագրական մի քանի վկայութեաններից կարելի յէ միայն կռահել, վոր իրենց սոցիալական դրութեամբ քաղաքացիներն ավելի բարձր են յեղել դասված, քան գյուղացիները:

Սոսկելով Վաղարշակ Թագավորի սահմանած կարգերի մասին՝ Սորենացին հատկապես մատնանշում է, վոր քաղաքացիներին պետք է ավելի հարգել ու պատվել քան գյուղացիներին:

«Հրաման է տալիս [Վաղարշակը],—ասում է Սորենացին,—վոր քաղաքացի մարդիկ ավելի հարգված ու պատվված լինեն քան գյուղացիները և վոր գյուղացիները պատվեն քաղաքացիներին ինչպես իշխաններին, իսկ քաղաքացիները շատ չպարծենան գյուղացիներին մոտ, այլ նրանց հետ վարվեն յեղբայրաբար, վորպեսզի պահպանվի բարեկարգութեանը և անախտանձ կյանքը, վոր պատճառ են բարեկեցութեան և կենաց խաղաղութեան»:

¹ Տես «Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ 1887, III, 22, էջ 230—231:

² Տես հրատարակ. Բեկկերի, Բոնն 1839, հատոր II:

³ Տես Հ. Որբելի, Անվտ ավերակները, հայեր. թարգմ., Վաղարշապատ 1911, էջ 26:

[«Հրաման տալ՝ և քաղաքացեաց մարդկան արդոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք»]¹:

Յորենացու այս վկայության մեջ կարեւոր և վնչ թե նրա պատմական կողմը, այլ այն, լոր Յորենացու ժամանակ, ինչ-նեւորդէ դարի յերկրորդ կիսում, քաղաքացիներն ավելի հարգված ու արտոնված դաս են համարվել, քան գյուղացիները:

Քաղաքացիների այս արտոնյալ դրությունը մատնացուցց է արված նաև Հովհաննես Դրասխանակերտցու ուշադրով մի վկայության մեջ: Սոսկով Զվարթնոց յեկեղեցու շինության մասին՝ նա հաղորդում է, լոր Ներսես Գ. կաթողիկոսը

«Ազատ ժամանակ գտնելով՝ իր շինած հրաշակերտ յեկեղեցու դռնի կողմը փակում ու ամրացնում և պաշտպանող շրջափարսպով և բնակիկութեւ տուն և կառուցում իրեն համար սրահ ներսում կոփած հաստահողույս քարերից: Այլև նույնպէս հաստատում ու բնակեցնում և այնտեղ յերդերի մարդկանց բաղմությունը քաղաքների բնակչության պայմանով»:

[«Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահողոյս կոփածոյ քարամբք: Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբօխութիւնս երգումարդաց ըստ պնայմանի քաղաքականաց»]²:

Թե ինչպիսի ներքին կազմակերպություն են ունեցել և թե քննչակն են կառավարվել վերահիշյալ քաղաքները՝ այդ մասին ևս մենք, դժբախտաբար, պարզ տեղեկություններ չունենք: Վերջը և միայն, լոր նրանք, լինելով թագավորական կամ իշխանական յերկրների կենտրոնականայրեր, գտնվել են Բագրատունիների,

¹ Տե՛ս «Մովսիսի Յորենացւոյ, Պատմութիւն Հայոց», Տիգրիս 1913, II, գլ. Ը, էջ 117—118:

² Տե՛ս «Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 88:

Արժրուէիներէի և աշխարհիկ կամ հոգևոր ֆետզաների իշխանության տակ:

Մատենագրական ազոտ ու պատահական վկայություններէից յերևում և նույնպէս, վոր հայկական մեծ քաղաքները նման են յեղել արևելյան հարևան յերկրներէ մեծ քաղաքներին վնչ միայն ըստ իրենց տիպի, այլ մասամբ նաև ըստ իրենց վարչական ներքին կարգերի: Անիի արձանագրություններում հիշատակված ե, որինակ, Անի քաղաքի կարևոր պաշտոնյաներից մեկը՝ «մուծսիր»-ը կամ «մուսայիր»-ը¹, արաբական հայտնի «մուսթա-սիր»-ը, վորին թե խալիֆայության և թե Բագրատունյաց քաղաքներում հանձնարարված և յեղել վերահսկողությունն առևտրի, արհեստների, շուկայի, կշիռների և չափերի վրա ու դանձումը քաղաքային հարկերի:

Աղբյուրների վորոշ ցուցումներից ու ակնարկներից դժվար է նաև հետեցնել, վոր քաղաքային կյանքում կարևոր տեղ և ունեցել յերկրագործությունը և քաղաքների բնակչության զգալի մասը կազմել են հողատեր ազնվական կամ ուսմիկ քաղաքացիները, վորոնք քաղաքի արվարձաններում ունեցել են այգիներ, բանջարանոցներ և հողագործական այլ տնտեսություններ: Բայց մեծ քաղաքների հարստության զլխավոր աղբյուրը վնչ թե գյուղատնտեսությունն եր, այլ, ինչպէս վերև տեսանք, միջազգային ու ներքին մեծ առևտուրը: Ուստի և հասկանալի յե, վոր քաղաքային տնտեսության մեջ մեծ կշիռ ու նշանակություն եյին ստացել հայ վաճառականությունն ու բուրժուազիան և խոշոր գեր եյին կատարում նմանապէս և արհեստավորները:

Արհեստավորության մասին Կովկասում և Հայաստանում խիստ հետաքրքրական են ակադեմ. Ն. Մառի դիտողությունները: Մառը յենթադրում և, վոր արհեստներով զբաղվել են այս յերկրներում տարբեր ցեղեր և վոր այդ վորոշ տեղերում պահպանվել և մինչև մեր օրերը: Նա բնութենում և նույնպէս արհեստագործության ժառանգական լինելը, արհեստակցական յեղբայրությունների գոյությունը և բնորական սկզբունքի կիրառումն այս կազմակերպություններում, վորոնք հետադաշտում վերածվել են համբարությունների²:

¹ Տէս Կ. Կոստանյանց, Վիմական Տարեգիր, Ս. Պետերբ. 1913, էջ 27 և 221:

² Տէս Մարր Н., Кавказский культурный мир и Армения, Петроград 1915, էջ 16—17:

Ակադեմ. Մառի այս յենթադրությունները միանգամայն հնարավոր կռահումներ են, և ավելի քան հավանական և, վոր նորագույն դարերի արհեստավորական համընթացությունների ծագումը շատ հին և և վոր նրանք գոյութուն են ունեցել ղեռնադրատունյաց Հայաստանում և, հավանորեն, նաև ավելի հին ժամանակներում: Համընթացությունները հայերի մոտ, ինչպես շատ ճիշտ մատնանշել և Աիվերգովը¹, իրենց ծագումը պարտական են արևելյան կյանքի ինքնուրույն հիմունքներին և գոյութուն են ունեցել մինչևիսկ Հին Պարսկաստանում: Յեւ իրավի, Սասանյան Պարսկաստանի ու արաբական խալիֆայության ներքին կյանքին վերաբերող նորագույն ուսումնասիրություններից հայտնի չե, վոր արհեստավորների խմբական միավորություններ գոյութուն են ունեցել ինչպես արաբական խալիֆայության, նույնպես և ավելի առաջ Սասանյան Պարսկաստանի քաղաքներում:

* * *

Դառնալով հարմար ու չեղոք տերիտորիա տրանզիտային ու միջազգային առևտրական հարաբերությունների համար՝ Բագրատունյաց շրջանի Հայաստանը և նրա քաղաքային կենտրոններն իրենք ևս մեծ չափով մասնակից չեղան համաշխարհային այդ առևտրին սեպհական իրենց արտադրության ապրանքներով: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ հաղորդում են, զխավորապես, արաբական աղբյուրները, վորոնց վկայությունները բավական ընդարձակ մեջ են բերված ֆրանսական գիտնական Լորանի «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» աշխատության մեջ:

Արաբական մատենագիր Տաբարին, որինակ, իր պատմության մեջ վկայում և, վոր Հայաստանը հարուստ և յեղել հացաբույսերով և իր ցորենին արտահանել և Բագրադ²: Այս կարևոր վկայությունից պարզ չերևում և, վոր ապրանքային լայն շրջանառության մեջ մտած և յեղել մինչևիսկ Հայաստանի ֆեոդալական-յերկրագործական մշակութիւնը:

Առանձնապես հետաքրքրական են նաև արաբական մատեն-

¹ *См.* Тифлиссские амкары, из записок Юрия Федоровича Ахвердова, Тифлис 1883, էջ 6—7:

² *См.* Լորան, «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև», Փարիզ 1919, էջ 38:

նագիրները հաղորդած տեղեկութիւնները Հայաստանի մեծ անտառների և Հայաստանից արտահանվող շինարարական փայտի մասին¹։ Արարական աշխարհագիր Իբն ալ-Ֆարկհի վկայութեամբ² Հայաստանի անտառներում կտրուած էջին ծառեր 20 թիղ հաստութեամբ և համեմատաբար մեծ քանակութեամբ վաճառուած էջին ընկուղիները։ Ուշագրութեան արժանի յե և այն, վոր Իստախրիի մոտ մատնացուցց են արված մեծ անտառներ՝ հատկապես Արարատ լեռան լանջերը վրա։ Այս վկայութիւններէց պարզ յերևում է, վոր Բագրատունաց շրջանում անտառային տարածութիւնը յեղել և Հայաստանում անհամեմատ ավելի ընդարձակ, քան հետագայ ավելի ուշ ժամանակներում։

Իբրև վաճառքի ու արտահանութեան կարևոր առարկաներ արարական մատենագիրները մոտ հաճախ հիշատակված են Հայաստանի ձկները³՝ Վանա լճի տառելիը, Սևվանա լճի իշխանը և Կուր դետի շամային։ Ուշագրով է, վոր միջին դարերում Հորացրած ու աղած ձուկը լայն սպուման առարկա յեր վնջ միայն Արևմտյան Յևրոպայում, այլև Արեւելքում։ Տառելիը և շամային, ինչպես հայտնի յե արարական աղբյուրներից, վաճառվում էջին մինչև իսկ Հայաստանից դուրս Արբելջանում, Իրաքում և այլ յերկրներում։ Իբն Սալդունի հարկացուցակից հայտնի յե նույնպես², վոր բացի զրամական մեծ հարկերից արարական խալիֆայութիւնը վերցնում էր Հայաստանում իբրև բնահարկ մեծ քանակութեամբ աղած ու թթու դրած ձուկ։

Իբն Սալդունի հարկացուցակի մեջ մատնանշված և առանձնապես, վոր իբրև բնահարկ Հայաստանը յուրաքանչյուր տարի խալիֆայութեանը տալիս էր 200 ջորի։ Ըստ յերևույթին, Հայաստանի ջորիները, ինչպես և ձիերը, շատ բարձր էջին գնահատվում վնջ միայն հին քսենտփոնյան, այլև արարական այս ժամանակաշրջանում։ Հայկական ձիերի պահանջը, ինչպես վկայում է Իբն Հաուքալը, նրանց պնդակազմութեան ու դիմացկանութեան պատճառով, շատ մեծ էր ամբողջ Խորասանում, Իրաքում և Ասորիքում³։

Արարական և հայկական աղբյուրները նույնպես հիշատակում են մի շարք լեռնային արդյունաբերութեան արտադրանք-

¹ Նույնը, էջ 40։

² S. A. K. r e m e r, Culturgeschichte des Orients unter den Chalifen, I, էջ 358։

³ S. A. K. r e m e r, «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև», էջ 39։

ներ, վորոնք արդյունահանվում էյին Բագրատունյաց Հայաստանում 8-րդ դարի վերջին քառորդում, ինչպես հայտնի յե Ղևոնդ պատմագրի վկայությունից¹, Հայաստանի լեռներում, հավանորեն Սպերում, գտնվել էյին արծաթի հանքեր: Յաքուտի աշխարհագրական բառարանում մատնանշված են յերկաթի հանքեր Վարաժնունիք գավառում և Բալուկ մոտ²: Պղնձի հանքեր կային Ղարձյալ այս Վարաժնունիք գավառում³ ու նաև Գուգարքում և Ապահունիքում: Մյուս հանածոներից աղբյուրների մեջ հիշատակվում են բորաքս և զառիկ, վորոնց արտահանությունը տալիս էր, ինչպես վկայում է Իրն Հառաքալը⁴, մեծ վաստակ: Համաձայն Յաքուտի և Իրն ալ-Ֆակիհի վկայություններին, Հայաստանում արդյունահանվում էյին նաև լեռնային ձյութ, սնդիկ, սղնձաքլասս և արձիճ⁵: Աղահանքերից, վոր հիշատակված են մի քանի շրջաններում, ամենից նշանավորն էր Կոզրի աղահանքը:

* * *

Ավելի մեծ է յեղել Բագրատունյաց Հայաստանի մասնակցությունը միջազգային ու տեղական մեծ առևտրին արհեստագործական իր արտադրություններով:

Աղբյուրների վկայություններից յերևում է, վոր վերածնության այս ժամանակաշրջանում արտասովոր արագությամբ զարգացել էր մանածագործական արդյունագործությունը: Այդ արդյունագործության և հատկապես Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մետաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ հաղորդում են արաբական մատենագիրները՝ Խստախրին, Իրն Հառաքալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները⁶: Սրանց վկայություններում հիշատակվում են Դվինի կտորներն ու հագուստները, վորոնք անվանվում էյին

¹ Տես հրատ. Մալխասյանցի և Յեղյանցի, Ս. Պետերբ. 1887, գլ. IԷ, էջ 155:

² Մ. Կ. Ղազարյան, «Հայաստանը արաբական տիրապետության տակ» (գերմ.), Մարբուրգ 1903, էջ 74:

³ Նույնը, էջ 74:

⁴ Տես Լորան, էջ 41:

⁵ Հմմտե Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис 1902, XXXI, էջ 39:

⁶ Տես Լորան, էջ 41, Караулов, Сборник материалов, XXIX, Kremer, Culturgeschichte des Orients, I ևն:

«մարիզի» (marizi), գոտիները, վորոնք արժեյին 1-ից մինչև 10 գննար (= մոտավորապես 5-ից մինչև 50 վոսիկ ուռլի), զլխի փաթթոցները, ծածկոցները, բազմոցների ու բարձի յերեսները, թիկնոցները և վարադույրները: Հիշատակվում և նաև Դվինում պատրաստվող յերփներանգ ու ծաղկավոր «բոզյուն» (bozjun) կոչվող մետաքսե ծանր կտորը:

Հայաստանի մանածագործվածքներն արտահանվում էյին վնչ միայն խալիֆայության արևելյան յերկրները, այլև Բյուզանդիա: Գերմանական գիտնական Կրեմերի ցուցումներէ¹, վորոնք հիմնված են արաբական աղբյուրների վրա՝ հայտնի յե, վոր Տրապիզոնում, վորը բյուզանդա-արաբական առևտրի զլխավոր նավահանգստային կենտրոնն էր՝ վաճառվում էյին մետաքսե հիանալի հայկական գործվածքներ՝ դիպակ (dybāg) և «բոզյուն» (bozjun) ու նաև այլ կտորներ: Հայկական գորգերը համարվում էյին ընտիր ու արժեքավոր, և Հայաստանը յուրաքանչյուր տարի խալիֆայությանը տալիս էր իբրեւ ընահարկ 20 գորգ²: Թանգարժեք հայկական գորգերը հիշատակված են նախնների թվում, վոր ուզարկել էր Գաղնեկյան Մախմուդը Կաշգարի Կաղըր-խանին³:

Շքեղ ու վոսկեզարդված մետաքսե հագուստների ու նաև բազմոցների փարթամ ու նկարազարդված յերեսների մասին, վոր նախրել էր Սմբատ Ա-ը (890/1—914 թ.) Ատրպատականի Յուսուֆ վոստրիկանին՝ հետաքրքրական են նույնպես Հովհաննես Դրասխանակերտցու հետեյալ վկայությունները:

1. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 198՝

«Իսկ արքան, ուրախանալով նրա [Յուսուֆի] առատաձեռն պարգևների վրա և ընդունելով մեծ շնորհակալությամբ՝ նրանից վնչ պակաս, այլ ավելի դեռ շատ ինքը նրան ընծայեց հանդերձանքների բարեկալելու, չքնադատես ու յերեվելի զարգարաքներ և բազմոցների նկարազարդված ու կարմիր վորդանաների գործվածքներ, և ըմպանակներ ու գավաթներ, և ամբողջովին վոսկուց շինված քամար՝ գործ հոռոմ վարպետների, տեսակ տեսակ ապակու գույներով...»:

[«Իսկ արքայի խրախ լեւի ի բարեձիր պարգես նորա՝

¹ Sbm Culturgeschichte des Orients unter den Chalifen, I, էջ 342:

² Նույնը, էջ 358:

³ Sbm Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб 1903, էջ 150:

և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեկալութեւ և չքնադատես և երեւելի դարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմութեամբ որդանց, և ըմբակս և նուագս և կամար ի համակ ոսկւոյ՝ գործ Հոռոմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակւոյ...»։
2. Նույնը, էջ 210՝

«Իսկ յերբ պատրվակը բացվեց և հասկանալի յեղավ մեզ հազարացի վայրագ գաղանի մոմոցն ու սպառնալիքը՝ ըստ բարի կամեցողության արքա Սմբատի ու նաև այլ նախարարների հանձնարարությամբ՝ յիս ճանապարհվեցի ու գլուխս քաշ գնացի պարսկական Ատրպատական դառնաբարտ վոստիկանի մոտ և արքունի թանգարաններից նրան տարա բազմազան ընծաներ ու նվերներ՝ վոսկեկար յերեւելի գլխատներ և շատ բազմոցներ, վոր գործել էյին նկարազարդող վոստայնանի կանայք, և շատ ձիեր ու ջորիներ, վոր հարգարված էյին զենքերով ու զարդերով, նաև վոսկու և արծաթի գանձեր»։

[«Իսկ արդ իբրեւ բացաւ պատրուակն՝ զեկուցաւ մեզ մոմոմն և սպառնութիւնն վայրագն գաղանի Հազարացւոյն, ըստ բարոյականի կամեցողի արքային Սմբատայ և այլոց ևս նախարարացն սաղրելոյ, դէմ եղեալ ևս տարադէմ գնացի ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երեւելի ոսկեճածուկ զգեստուք և ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս և ջորիս ի դարդս և ի զէնս յարդարեալ, այլ և գանձս ոսկւոյ և արծաթոյ»]։

Միջնադարյան հայ մանածագործության ուսումնասիրության աւ գնահատման համար առանձնապէս կարեւոր են, իհարկեւ, նաև այն մանածագործվածքները, վորոնք ձեռք են բերված պեղումներից։ Այս տեսակետից կարեւոր գյուտեր են արված Անիում կատարված պեղումների ժամանակ։ Ակադեմիկ Հ. Որբելու «Անիո ավերակները» աշխատության մեջ¹ մատնացույց և արված, վոր 1908 թվին Անիում

«Գտնված և մետաքսե ամբողջ հագուստ վոսկե բանվածք-

¹ Տես հայերեն թարգմ., Վաղարշապատ 1911, էջ 46։

ներով ու մետաքսով, և վոսկով նուրբ հյուսած քող և մետաքսե ժապավենից գոտի»:

* * *

Մանածագործական արդյունաբերության զարգացման համար Հայաստանը վնչ միայն ունեւ հումք՝ բուրդ, բամբակ և մետաքս, այլև ամեն տեսակ ներկեր, վորոնց պահանջը Հափաղանց մեծ էր Միջին դարերում:

Ինչպես հայտնի յե հունական, հռոմեական և հին հայկական աղբյուրներից, Հայաստանը դեռ հին ժամանակներում խիստ հարուստ էր հանքային և բուսական ներկերով: Ստրաբոնն իր «Աշխարհագրության» մեջ հաղորդում է¹, վոր Սպերում կար «սանդիկ» (sandyx) մետաղը, վորն անվանվում էր նաև «հայկական ներկ» և նման էր ծիրանի ներկին: Պլինիոսը նույնպես իր «Բնական պատմության» մեջ² հիշում է Հայաստանում պատրաստվող մի ներկ, վոր նկարիչներն անվանում էին «որոբիտիս» (orobitis), նաև Հայաստանից արտահանվող մի քար, վոր հիշվում էր «արմնիում» (armenium) և ներկում վոսկերորակի (chrysocolla) նման: Պորենացու «Աշխարհագրության» մեջ³ Աղծնիք նահանգում հիշատակված է «դլթոր»-ը, վորը, ըստ յերևույթին, գործադրվում էր սև ներկի համար:

Բայց ամենից հռչակավոր ու մեծագին ներկը Հայաստանի «որդան Դարմիրն» էր, վորն արդյունահանվում էր Արարատյան դաշտում: Այս ներկի մասին կարևոր տեղեկություն և տալիս է Ղազար Փարպեցին:

«Նաև իզուր չէ,—ասում է նա,—Արարատյան ամենաբաղձալի դաշտն իրեն մեջ սնուցանում յեղեգնասեռ բույսերի արմատներ. այլ նա, ծնելով նրանցից վորդեր իբրև կարմրատեսիլ գույների զարդ՝ ընծայում է ողուս սիրողներին վորպես շահ և շքեղութուն»:

[«Նաև զարմատս եղեգնասեռ բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդուս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»]⁴:

¹ Տես XI, 14, 9:

² XXXIII, 27, 1 և XXXV, 28, 1 (հրատ. Լիտտելի, Փարիզ 1883):

³ Տես «Մատենադրութիւնք», Վեներտիկ 1843, էջ 607:

⁴ «Ղ ա զ ա ր ա տ յ Փ ա ր պ ե ց ա ո յ, Պատմութիւն Հայոց», Տփղիս 1904, I, գլ. 7, էջ 10:

Արաբական աղբյուրների մեջ այս ներկն անվանված և «քիրմիզ»։ Նա մեծ քանակությամբ ծախվում էր Պարտավում, Բաղդադում և արևելյան մեծ քաղաքներում և, ինչպես մատնանշում և գերմանական գիտնական Հայդը¹, նրանով Բաղդադում, ներկում էյին մետաքսե գործվածքները, վորոնք «քիրմիզ» անունով արտահանվում էյին նույնիսկ Յեվրոպա։ Հայաստանում ներկարուծիչան ամենախոշոր կենտրոնն էր Դվինի մոտ գտնվող Արտաշատը, վորն արաբական մատենագիր Բելադորին անվանում և «քիրմիզ»-ի, այսինքն՝ «վորդան կարմիրի գյուղ»²։

Արհեստագործական արտադրության մյուս ճյուղերից մեծապես զարգացած էր Հայաստանում բրտուծիչունը։ Սրա զարգացման պարզ ապացույց է այն ամանեղենը, վոր ձեռք է բերված պեղումներով և պահվում և թանգարաններում։ Անիի ու Դվինի պեղումների ժամանակ, ինչպես հայտնի յե, գտնված են մինչ միայն սովորական կավեղեններ, այլ մինչևիսկ շքեղ հախճապակի։ Մասնավորապես Անիում գտնված հախճապակյա ամանների մասին, վորոնք, մեծ մասամբ, Անիում են շինված, ուշագրավ են ակադեմ. Որբելու հաղորդած հետևյալ տեղեկությունները։

«Զարմանալի յեն,—ասում և Որբելին,—հախճապակյա ամանները իրենց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակիից ամանները՝ իրենց հարուստ և բազմազան վոսկեղծ ու բազմերանգ նկարներով, նույնպես և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով, զորանք գտնված են թագավորական ապարանքի պեղումներում։ Բեկորներից յերևում է, վոր ամանների մեծագույն մասը թափովի յե, և աչքի յեն ընկնում թափման (վոր հինգ տեսակից ավելի յե) բարձր կատարելությամբ, նույնպես և գեղարվեստորեն կատարված լինելովն ու ներկերի պայծառությամբ»³։

Մետաղների արդյունահանման և մշակման մասին պատահական ու հարեանցի տեղեկություններ տալիս են հայկական աղբյուրները։ Մետաղագործությունը, ինչպես մատնացույց է արել ակադեմ. Ն. Մառը, կովկասյան ժողովուրդները ժառանգել

¹ S^{en} W. Heyd, Histoire du commerce du Levant, հատ. II, էջ 609։

² Баладзори, перев. П. К. Жусе, Баку 1927, էջ 10։

³ Տես «Անվն աղբրակները», հայեր. թարգմ., Վաղարշապատ 1911, էջ

էյին հարեթական բնիկներէց, վորոնց մօտ մետաղագործական արհեստները զարգացած էյին դեռ հնագուէն ժամանակներում: Հատկապէս Բագրատունյաց շրջանում Մովսէս Կաղանկատացու մօտ հիշված են արհեստագործներ, վորոնք ունէյին զիտուէթյուն «վոսկեգործության, արծաթահալության, յերկաթահանության և պղնձագործության»¹: Անիի և Դվինի պեղումներէ ժամանակ հայտարեւրված են մի շարք իրեր, վորոնք զաղափար են տալիս նաև Բագրատունյաց ժամանակաշրջանի դարբնության, զինագործության, վոսկերչության ու այլ արհեստներէ մասին:

Ակադեմ. Որբեկու վերոհիշյալ աշխատության մէջ հիշատակված են, որինակ, Անիի պեղումներէ ընթացքում գտնված մետաղե հետեյալ իրերը՝ մեծ սուր, յեռաժանի տեղ, նիզակների ծայրեր, արուշի ու պղնձե սափորներ, պղնձե սկալառակ, արծաթե զավաթներ, յերկաթե ճրագակալներ են: Պետք է սակայն մատնանշել, վոր շատ դժվար է ճշտիվ վորոշել այդ իրերի ծագման դարաշրջանը:


* * *

Քաղաքների ու քաղաքային տնտեսության բուռն ու արագ զարգացումը 10—11-րդ դարերում արժանի յե առանձին ուշադրության: Լինելով կենտրոններ արհեստների, արդյունաբերության և փողային ու ապրանքային տնտեսության՝ Բագրատունյաց Հայաստանի քաղաքները իրենց մէջ պարունակում էյին ֆեոդալական կազմակերպությանը ներհակ ու ընդդիմադիր նոր ուժեր, վորոնք, ինչպէս և Արևմտյան Յեվրոպայում, հետզհետե ծնունդ էյին տալիս տնտեսական ու սոցիալական նոր հարաբերութիւններին:

Տնտեսական կյանքում պարզ նկատելի յեր այս ժամանակաշրջանում բացահայտ հեղաբեկումը փողային շրջանառության զարգացման ուղղութիւնով: Արձանագրութիւնների տեղեկութիւններից յերևում է, վոր դրամական շրջանառութիւնը տարածվել էր ամբողջ յերկրում ամենամեծ չափերով: Մեր նախորդ աշխատութիւններից մեկում մենք արդեն ցույց էյինք տվել, վոր 10-րդ և 11-րդ դարի առաջին կիսի տուրքերից շատերը յեղել են դրամական²:

¹ «Պատմութիւն Այդուանից աշխարհի», Մոսկվա 1860, II, 16, էջ 131:

² Տե՛ս «Հայաստանի պատմութիւնը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», Յերեկան 1922, էջ 93—94:



Աղձամարի յեկեղեցու արևելյան պատը

Սյունյաց Սուփան իշխանի 901 թվի Մաքենոցք վանքի արձանագրության մեջ ասված է՝

«Յես Սուփան, Սյունյաց իշխան, շինեցի Մաքենոցքի յեկեղեցիները և առատորեն զարդարեցի պատվական կահույքով և աստվածային դրքերով. և տվի սրան, վոր յեկեղեցու անունով կոչվում է Աստվածածին, մեր սեփական հողը բոլոր սահմանով՝ լեռ ու դաշտով. և տվի ձկան վորսատեղին Բողաշենը սեղանին, և 700 դրամ Դեղձանագետի կապալից, 200 դրամ Կաթուկից, 350 Անմեռից, վոր միասին կանս 1250 դրամ»:

«Ես Սուփան, Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս, և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանաւք, և ետու զսեփական տեղն մեր ի սա, որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, ամենայն սահմանաւք՝ լերամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց, զԲողաշէն, սեղանոյն, և եւթն հարիւր դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեքհարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ. դրամ...»¹:

Նմանապես՝ Շապուհ Բագրատունին, Հայոց Աշոտ Թագավորի վորդին, 903 թվի Վանեվանի արձանագրության մեջ ասում է.

«Յեւ տվի [Վանեվանի յեկեղեցուն] հինգ գյուղի սահման՝ Կոթաքարը, Աղարո վանքը, Շավառնահողը, Գետամեջը, Կթանոցը, Գետավանաց ծովը՝ 260 դրամ Կոթաքարից, 530 Բրտենիքից, 660 Աղարո վանքի ծովից, 990 Կարբի գետերից և նավերից»:

«Եւ ետու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղարոյ վանան Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, երկու հարիւր վաթսուն դրամ ի Կոթաքարէն, հինգհարիւր երեսուն ի Բրտենեացն, վեց հարիւր վաթսուն յԱղարոյ վանացն ծովէ, իննհարիւր իննսուն ի Կարբին գետերէն և ի նաւերէն»²:

¹ Տէս «Վիմական տարեգիր», կազմ. Կ. Կոստանյանց, Ս. Պետերբ. 1913, էջ 5:

² Տէս նույնը, էջ 6:

Գազիկ Շահնշահը 1010 թվի Մաստարայի արձանագրու-
թյան մեջ հայտնում է՝

«Յես Գազիկ Շահնշահ, Աշոտի վորդին, հայտնեցի իմ
կամքը՝ թողի Մաստարայի հարկի ավելորդը, 6000-ը դարձ-
րի 5000»:

[«Կամ եղև ինձ Գազկայ Շահնշահի, որդւոյ Աշոտոյ,
թողուլ զՄաստարայի հարկին զաւելորդն ԶԹ. և ածի ՆԹ.»]:
Մեջ բերված արձանագրությունների բովանդակությունից
յերևում է, վոր 10—11-րդ դարերում նույնիսկ գյուղական հար-
կերը ստացվել էյին դրամով:

Միանգամայն բնական է ու հասկանալի, վոր Բագրատու-
նյաց Հայաստանում էս, ինչպես և Ֆեոդալական այլ յերկրներում,
դրամական տնտեսության աճման ու խորացման հետ զուգընթաց
ուժեղանալու յեր վաշխառուական կապիտալի դերը և ծանրա-
նալու յեր ռամիկ բնակչության դրությունը, վորը հարկա-
դրված էր վաշխառուներից դրամ վերցնել ահագին տոկոսներով:
Ժողովրդի այս ստորին խավերի անողոք շահագործումը և ծանր
դրությունը ցայտուն կերպով նկարագրված է Արիստակես Լաս-
տիվերացու պատմության մեջ:

Սոսկով Արծն քաղաքի ավերման մասին 1049 թվին՝ Լաս-
տիվերացին վկայում է, վոր այստեղ

«սասմանիկ էյին վաշխի և տոկոսների որևնք և ցորենի
բազմապատկություն, վորով յերկրը պղծվում է և խան-
դարում է արդանդին իր ժամանակին պատուղ տալ վորպես
մարդկանց ուտելիք: Ով խարում էր ընկերոջը՝ պարծենում
էր, վոր իմաստուն է, և ով հափշտակում էր՝ ասում էր,—յես
հղոր եմ: Մեծատունները հափշտակում էյին ընտանեկից
աղքատների տները ու նաև նրանց անդաստանների սահ-
մանները»:

[«Վաշխից և տոկոսաց օրէնք եղան, և ցորենոյ բազ-
մապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարդանդ առ
ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդ-
կան: Որ խարէր զընկերն՝ պարծէր իմաստուն զոր, և որ
յափշտակէր՝ ասէր,—Ես հղօր եմ: Զտունս տնակից աղքա-
տացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մե-
ծատունքն...»]²:

¹ Նույնը, էջ 13:

² «Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերացւոյ», Թիֆլիս
1912, ԺԲ, էջ 79:

Նույն հեղինակը, նկարագրելով Անի քաղաքի ավերածու-
թյունը և կոտորածը 1064 թվին՝ վաշխի մասին տալիս և դար-
ձյալ հետևյալ տեղեկությունը.

«Այլև նրա մեջ կատարված անիրավության ճարպից
այրվեց բարձրաշեն ու գեղեցկահարմար ապարանքը և բո-
լոր բնակարանները դառան սոսկ մի հողաբլուր, և վաշխն
ու նենդությունը, վոր նրա մեջ տեղի եյին ունենում, դա-
դարեցին: Այս և անիրավ քաղաքները բաժինը, վորոնք
շինվում են դրսեցիների արյունով և փարթամանում են
տնանկների քրտինքով և իրենց տներն ամրացնում են
վաշխով ու անիրավություններով»:

[«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործեւոցն
տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և
եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր, և վաշխն և
նենդութիւնն որ ի նմա խափանեցաւ: Այս է բաժին անի-
րաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և
ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանի-
րաւութեանց գտունս իւրեանց ամրացուցանեն»] 1:

* * *

11-րդ դարի առաջին կիսում, Սելջուկյան արշավանքներից
առաջ, ֆեոդալական Հայաստանի կյանքը, ինչպես շատ ճիշտ
մատնանշել է ակադեմ. Նիկ. Մառը², իրենից ներկայացնում եր
հակադրում, մի կողմից, աշխատավոր հայ ժողովրդի կեղեքվա-
ծության և, մյուս կողմից, հարստությունների կուտակման իշ-
խող դասերի փոքրաթիվ խմբի ձեռին:

Թե ինչպիսի մեծ հարստություններ հավաքվել ևր նույն-
խակ հայ յեկեղեցու և հոգևորականության մոտ՝ այդ պարզ յե-
րևում է, որինակ, Մատթեոս Ուռհայեցու կարևոր մի վկայու-
թյունից:

Խոսելով Արծն քաղաքի ավերման մասին 1049 թվին՝ Ուռ-
հայեցին պատմում է, վոր կողոպտված

«վոսկու, արծաթի ու գիպակների մասին ավելորդ է
խոսել, վորովհետև անկարելի յև այդ գրի առնել: Բայց յես
շատերից հաճախ լսել եմ քորեպիսկոպոսի մասին, վորին

1 Նույնը, ԴԴ, էջ 166—167:

2 Տե՛ս Առի, էջ 29:

անվանումը էյին Դավթուկ, վոր նրա գանձանոցը վերցրել էր «Արբրիհիմ»-ը և նրա գանձերը բռնել էյին քառասուն ուղտի վրա. նրա անից դուրս էյին յեղնում [հերկի] ութ հարյուր գութան, վորոնցից յուրաքանչյուրին լծված էյին վեց լուծ յեղ»:

[«Այլ գոսկուց և զարծաթոց և զգիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով. բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դավթուկ, եթէ զգանձատունն նորա Արբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր վեցկի եղանց ելանէին ի տանէ նորա»]¹:

Վոր Բագրատունյաց թագավորության ժամանակ Հայաստանի տնտեսական կյանքը վերակառուցվում էր նոր հիմքերի վրա և վոր այդ հեղաշրջումը կատարվում էր փողային ու ապարանքային տնտեսության զարգացման, դասակարգային հակասությունների խորացման և բնակչության ստորին խավերի անողոք շահագործման ուղղությամբ՝ այդ յերևում է Արիստակես Աստուխկերտցու կրոնա-բարոյական գաղափարներին նախկին ժամանակների առաքելի բարքերի ու յերջանիկ կյանքի մասին, վոր նա հակադրում է իր ժամանակվա անիրավ ու արծաթասեր բարքերին և փարթամ ու շվայտ կենցաղին:

Սոսկելով Արծն քաղաքի կոտորածի մասին 1049 թվի Սելջուկյան արշավանքի ժամանակ՝ Արիստակես Աստուխկերտցին այդ քաղաքի հին արդարակյաց նիստուկացը հակադրում է նրա նոր անիրավ կյանքին:

«Արդ՝ առաջվա ժամանակները,—ասում է նա,—յերբ սա առատորեն բարի գործերով էր զարդարված՝ ամեն ինչ սրա ուղածի պես էր լինում. և սա նման էր նորահարս կնոջ, վորն ամենքին ցանկալի յեր վայելուչ գեղեցկության ու պայծառ զարդերի պատճառով:Բայց յերբ մեր յեկեղեցիները մուտք գործեցին Սեքստացիք և Պիհոնացիք և արդարության որենքները վերածեցին անիրավության ու հարգվեց ավելի արծաթասիրությունը քան աստվածսիրությունը և մամոնան քան Քրիստոսը՝ այն ժամանակ բոլոր համեստ կարգերը փոխվեցին և վերածվեցին անկարգության: Սրա [Արծն քաղաքի] իշխանները դառան գողերի ընկերակիցներ, չարագործներ ու արծաթի ծառաներ: Սրա

¹ Տես Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ 1898, էջ 103:

դատավորները դառան կաշառակերներ և կաշառքի համար խարդախում էլին իրավունքը...»:

[«Արդ սա յառաջինսն՝ մինչդեռ բարեացն առատութեամբ պատկեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահաւան կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն: Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքստացիք¹ և Պիհոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն զարձաւ, և յարգի եղև արծաթսիրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայն քան զՔրիստոս. յայնժամ ամենայն համեստութիւն կարգաց զառաժեալ՝ յանկարգութիւն զարձաւ: Իշխանք սորա Պողակիցք եղեն զողոց, վրիժագործք և արծաթսյ ծառայք. դատաւորք սորա կաշառաւորք և վասն կաշառաց զողանային զիրաւունս...»]²:

*
* *

Բազրատունյաց Հայաստանի տնտեսական զարգացումը 10—11-րդ դարերում մեղ հիշեցնում է Արևմտյան Յեվրոպայի զարգացումը ռեֆորմացիայից առաջ 14—15-րդ դարերում: Արեւելահայտնական արտադրութեան և ապրանքային ու զրամական տնտեսութեան զարգացման զուգընթաց, ինչպես հայտնի յե, Յեվրոպայում սկսվել էին հեղաբեկվել ֆեոդալական հին կարգերը և այդ հեղաբեկումը կատարվում էր զասակարդային սուր պայքարի պայմաններում: Նույնը նկատելի յե ըստ իս գերմանական ռեֆորմացիայից մոտ չորս դար առաջ՝ Բազրատունյաց Հայաստանում:

Արարական տիրապետութեան ժամանակ, ինչպես մատնանշել ենք մեր նախորդ ուսումնասիրութեաններում³, Հայաստանի տնտեսական կյանքը մեծապես հետադիմել էր և զարգանում էր բնական տնտեսութեան հետադարձ հիմքերի վրա: Բայց 10—11-րդ դարերում ապրանքա-զրամական տնտեսութեան բուռն զարգացումը Հայաստանում ևս, ինչպես և Արևմտյան Յեվրոպայում, հետզհետե քայքայելով նախկին բնատնտեսութեանը, սկսել էր արդեն անդրադառնալ ֆեոդալական կարգերի վրա և, նպաստելով տնտեսական ու սոցիալական նոր հարաբերութեանների զոյացման՝ ուժեղացրել էր զասակարդային պայքարը:

¹ Ուղղել ենք Սեքստացիք փխ. «Սեքարայիք»:

² Տես գլ. ԺԲ, էջ 78—79:

³ Տես «О торговле и городах Армении», էջ 133—137:

Այս ժամանակաշրջանում վաշխառուական կեղեքումների պատճառով խիստ սաստկացել էր գյուղացիության հողազրկումը և ռամիկ ժողովրդի աղքատացումը: Արխատակես Լաստիվերտցին, ինչպես վերև տեսանք, պարզ մատնանշում է, վոր մեծատունները հափշտակում էին աղքատների տները ու նրանց անդաստանները և վոր քաղաքները շինվել էին տնանկների արյունով ու քրտինքով, վաշխով ու անիրավություններով:

Ինչպես Ֆեոդալական արևմտյան յերկրներում, նույնպես և Արևելքում, հողազրկել ու աղքատ ռամիկ բնակչությունը կուտակվում էր, մեծ մասամբ, քաղաքների արվարձաններում: 10-րդ դարի արարական մատենագիրները մատնանշում են, վոր Ընչադուրկ մասսաները, վորոնք ապրում էին «Ուրադ»-ներում, ախինքն՝ շահաստան քաղաքների արվարձաններում, պետության ամենաանհանգիստ տարրն էին և մեծ դեր էին կատարում քաղաքացիական կռիվներում¹: Ն. Մաուր, հիմնվելով իր կատարած պեղումների վրա՝ մատնացույց է արել, վոր ժողովրդի ստորին աշխ խավերն Անիում ապրում էին մուրացկանային հյուղերում և քարքարոտ գետնում փորված վորջերում²:

Միանգամայն բնական է, վոր քաղաքներում խմբված թշվառ ու անդործ աշխ բնակիչների գլխավոր զբաղմունքը պետք է լիներ կամ մուրացկանությունը և կամ գողությունն ու ավազակությունը:

Այդ տեսակետից բնորոշ է ու հետաքրքրական Ասողիկի վիկայությունը գիշերային կողոպուտների ու ավազակությունների մասին Կարս քաղաքում:

«Յեւ սկիզբ դնելով ամեն տեսակ բարեգործությունների, — պատմում է Ասողիկը, — [Կարսի Աբաս թագավորը, 984—1029 թ.] ամենից առաջ իր յերկրում վերացրեց ավազակությունը և մարդադավությունը, վոր Վանանդի ժողովուրդը, ինչպես ասում է պատմագիրը³, համարում էր իբր հայրենի գործ: Սրա հոր ժամանակ վնչ միայն ճանապարհներին ու բաց տեղերում էին թալանում, այլև հենց քաղաքի մեջ յերեկոյան ժամերին ու ամբողջ գիշերը լավում

¹ Համմատե՛ Ա. Ю. Якубовский, Махмуд Газневи, Фердовси, «Сборник статей», էջ 63:

² Տե՛ս Անի, Ленинград 1934, էջ 29:

³ Տե՛ս «Մ ո վ ս ի ի Ն ո Ր Ե ն ա ց ւ ո թ, Պատմութիւն Հայոց», Տփղիս 1913, III, գլ. 44, էջ 313:



Անբերդ:

Եյին կողոպուտները անվերջ ճիչեր ու ձայներ: Իսկ տա-
 ինքը վրեժխնդիր յեղավ և բռնված գողերին անաչառ կեր-
 պով մահվան դատապարտեց, առանց խնայելու մեծերին
 կամ փոքրերին, իշխաններին կամ շինականներին: Յեվ նա
 այնպես խաղաղացրեց իր յերկիրը, վեր բոլորը նույնիսկ
 գիշերները ման եյին գալիս ինչպես ցերեկը և անգամ ան-
 մարդաբնակ տեղերում շրջում եյին վորպես ապարանքում:
 Ամենքը պարապում եյին շինության ու աշխատանքի գոր-
 ծերով և ուղղվել եյին արդարադատ դատաստանի միջո-
 ցով»:

[«Եւ սկիզբն արարեալ ամենայն բարեգործութեանց՝ նախ և առաջին երարձ նա յաշխարհէն իւրմէ դաւադակութիւն, զմարդադաւութիւն, զոր ազգն Վանանդայ իբրեւ զհայրենիք ունէին, ըստ ասելոյ պատմադրին: Եւ յաւուրս հօր սորտ ոչ միայն ի ճանապարհս և ի ըսցեալ տեղիսն կողոպտէին՝ այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն և զգիշերն ամենայն ճիչք և ձայնք կողոպտանաց լինէին: Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ, և զգտեալ զողոսն անաչառ մահու դատապարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքունս, յիշխանս կամ ի շինականս. և այնպէս խաղացոյց զաշխարհն իւր՝ մինչ զի ի գիշերի իբրեւ ի տունջեան, և յանապատի իբրեւ յապարհս շրջէին ամենեքեան, շինութեան և աշխատութեան գործոց պարապէին, արդարապատ իրաւամբք ուղղեալք»]¹ :

* * *

Քաղաքների ու ասլրանքա-դրամական հարաբերություններ ի դարդացման այս ժամանակաշրջանում Բագրատունյաց Հայաստանում ևս, ինչպէս ռեֆորմացիայից առաջ Արեւմտյան Յելլոպոլում, դասակարգային պայքարի սաստկացման պարզ ցուցանիշներ ելին գյուղացիական ապստամբական շարժումները:

Դտնվելով տնտեսական ծանր դրության մեջ, հայ գյուղացիութիւնը, վերն աշխատ ամենամեծ չափերով շահագործման երկնթարկվում, ապստամբել եր իշխող հողատեր ազնվականութեան դեմ տասերորդ դարի սկզբներում: Այդ ապստամբութիւնը, վեր տեղի յեր ունեցել Սմբատ Ա-ի մահից (914 թ.) և Ատրպատականի Յուսուֆ վոստիկանի աշխարհավեր արշավանքներից հետո՝ հիշատակված և Հովհաննես Դրասխանակերտցու պատմութեան հետեյալ հատվածում.

«Ստորները,—ասում և կաթողիկոս պատմիչը,—աշխատում ելին ավելի առաջ անցնել քան մեծամեծները, և ծառաները, խրոխտանալով, փքվելով ու մեծ ապստամբութիւն բարձրացնելով՝ Սողոմոնի նման հերյուրում ելին, վեր տերերը տրեխ հաղնեն և դետնի վրա ման գան, խոլ իրենք բարձրանան յերկարավիզ և վոտնատակ տրորող ձիերի վրա:

¹ «Ս տ ե փ ա ն ո ս ի Տ ա ր օ ն ե ց ե ո յ Ա ս ո ղ կ ա ն, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբ. 1885, III, գլ. Ժէ, էջ 196—197:

Իսկ մեր թագավորներին, պետերին և իշխաններին, վորոնք ի բնի մեր նախարարություններն եյին, աշխատում եյին հանել և դուրս քշել նրանց բնակություններից և ուղղում եյին ըստ իրենց ցանկության կարգել պատահական ու նոր պայագատներ և սպասալարներ»:

[«Վասնզի նուագունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեսարս տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուցեն և ինքեանք ելցնէ յերկաւս ահիւարանոցս և առաթուր հարողս՝ խորխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ: Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնքն եյին՝ ջանային վարատել և խլել յւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս»]¹:

Դասակարգային հակասությունների սրման ու ֆեոդալական վարդերի դեմ մղվող պայքարի ուժեղացման արտահայտություններից մեկն էր 10—11-րդ դարերում նաև Թոնդրակեցիների աղանդի լայն տարածումը, վորն ուներ վնչ միայն կրոնական, այլև սոցիալական բնույթ: Այս շարժումը պարզապես դեմոկրատական էր՝ և սրա հետևորդը գրեթե բացառապես աշխատավոր հասարակ ժողովուրդն էր:

Թոնդրակեցիները, վորոնք, հավանորեն, հաջորդներն եյին հայ Պավլիկյանների՝ ամենախիստ քննադատությանն եյին յենթարկում պաշտոնական հայ յեկեղեցին, նրա դավանաբանությունը, ծիսակատարությունները և ֆեոդալական բնույթ ունեցող նրա յերարխիական կաղմակերպությունը: Թոնդրակյան աղանդավորների գաղափարախոսությունը հիմնականում մի սուր բողոք էր վնչ միայն հղբացած ու ալյասերվող տիրող յեկեղեցու դեմ, այլ նաև հայկական ֆեոդալիզմի և իշխող դասերի հարստահարությունների ու ճնշման դեմ:

Հայ յերկրում և հայ միջավայրում ծագած ու սնած Պավլիկյան ու Թոնդրակյան աղանդավորները, վորոնք դժպան հալածանքների եյին յենթարկվել Հայաստանում, ինչպես հայտնի յե, վտարվել եյին, մեծ մասամբ, Ասորիք, Փոքր Ասիա և մասամբ նաև Բուլղարիա: Յեւ ինչ ալ աղանդավորները յեղան, ինչ-

¹ «Յովհանն ու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 258—259:

պես այժմ յենթադրում են, հիմնադիրները ու նախահայրերը բուլղարական բողոմիւնների և հարավային Յրանսիայի Ալբիդենների, վորոնք նախակարապետներն էյին զերմանական ուֆորմացիայի և յսվրոպական պրոտեստանտիզմի:

* * *

Տնտեսական ու սոցիալական այն յերեւոյթները, վոր վերեմենք մասնանշեցինք, ցուցանիշներ են, իհարկե, վորոշ տեղաշարժի ու փոփոխությունների, վոր տեղի էյին ունենում Հայաստանի ներքին կյանքում 10-րդ և, մասնավանդ, 11-րդ դարերում: Այդ յերեւոյթները հատկանշական են ու բնորոշ քայքայվող ֆեոդալիզմի համար, վորի սկիզբը կարելի յե ըստ իս Հայաստանում յենթադրել հենց այս ժամանակաշրջանում:

«Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» մեր ընդարձակ աշխատության մեջ մենք ուսումնասիրել էյինք Հայաստանի նախարարական կազմակերպությունը միմիայն Արշակունյաց թագավորության և մարզպանության շրջաններում: Հայկական ֆեոդալիզմի լրիվ ուսումնասիրության համար անհրաժեշտ է, իհարկե, նաեւ նրա անկման այս շրջանի մանրամասն պարզաբանումը, վորը կարոտ է դեռ լուրջ ու ուշադիր քննության:

Թողնելով այդ ապագային՝ մենք ավելորդ չենք համարում տալ այժմ ֆեոդալիզմի այս շրջանի մասին մի քանի թուղցիկ դիտողություններ:

Մատենադրական աղբյուրների քննությամբ, իմ կարծիքով, ընդհանրապես վորոշվում է, վոր 10-րդ և, գլխավորապես, 11-րդ դարի առաջին կիսում, տնտեսական ուժեղ ու արագ զարգացման հետ միասին, ֆեոդալական կյանքի աստիճանական վերասերումը տեղի յեր ունենում հիվանդագին կերպով՝ իշխող դասերի հուսալքման ու անկումային տրամագրությունների մթնոլորտում: Այս հոռետեսությունը, մեկամաղձությունն ու միտտիկան նկատելի յեն ըստ իս 11-րդ դարի գրականության ու գաղափարախոսության մեջ, վոր հետագայում պետք է մանրամասն լուսաբանվին պատմական-գրական հատուկ ուսումնասիրությունների միջոցով:

Ուշագրավ է նախ և առաջ այն, վոր սոցիալական հակասությունների սրման ու հին կյանքի աստիճանական կազմալուծման այս ժամանակաշրջանում դժգոհությունը Հար ու անիրավ կյանքից իր գործնական արտահայտությունն էր գտել վանական ու ճգնավորական կյանքի մեջ, վորը խիստ զարգացել էր հատ-

կապես 10-րդ դարում: Այս ժամանակվա իդեոլոգիայի մեջ իշխում էր աշխարհի ու կյանքի ունայնությունից դադարվածը և վերկուծ թյունը բոլոր չարիքներից համարվում էր մարմնի վոչնչացումը և խորշումը զգալի աշխարհից: Հուսահատական վախուշատը կյանքից և միստիկական մուսյլ այդ աշխարհայեցողությունը, ինչպես հայտնի է, իրենց կատարյալ արտահայտություն են գտել մեծագույն հայ բանաստեղծի, Գրիգոր Նարեկացու, ճգնալորական վոդերբուդություն մեջ:

Հուսաբեկումը և իր ժամանակվա շվայտ ու ամբարտաւան կենցաղի դատապարտումը, ինչպես վերև տեսանք, մեծ տեղ և զբաղում Արիստակես Լաստիվերացու պատմական յերկում:


Առանձնապես հետաքրքրական են այս շրջանում հասն այն ներհակությունները, վորոնք աճել ու խորացել էյին վնչ միայն իշխող ու շահագործվող դասակարգերի, այլև սրանց հակադիր դադարախոտությունների մեջ: Մի կողմից խիստ զարգացել էր այս դարերում յեկեղեցական սխոլաստիկական ու միստիկական գրականությունը, վորի մեջ բնորոշ էյին տխուր մարդարեություններն աշխարհի վերջը մոտենալու մասին, իսկ մյուս կողմից հետզհետե փարատվում էր թանձր միջնադարը և արդեն ծնունդ էր առնում աշխարհիկ ու ժողովրդական գրականությունը, վորի մեջ մարմնավորվում էյին ռամիկ ու աշխատավոր ժողովրդի ակունկալությունները և ձգտումները: Ժողովրդական նոր մտածողություն և աշխարհայեցողության արտադրություններ պետք է համարվեն, անտարակույս, մասնավորապես Թոնդրակեցի կոչված վերսհիշյալ հայ աղանդավորների գրվածքները, վորոնցից, դժբախտաբար, մեր ձեռքը հասել են միմիայն աննշան մնացորդներ:

Մեր վերսհիշյալ վաստական դիտողություններից՝ Հայաստանի տնտեսական ու սոցիալական զարգացման առանձնահատկություններին մասին 10—11-րդ դարերում, կարելի է ըստ իս հետեցնել, վոր առևտրի, քաղաքների, արդյունադործության և զրամական ու ապրանքային տնտեսություն բուռն ու արագ աճմամբ Հայաստանում ևս ֆեոդալիզմը սկսել էր քայքայվել և վոր հասարակայն կյանքն այստեղ ևս կարող էր վերակառուցվել առաջադեմ նոր հիմքերի վրա, ինչպես այդ հինգ դար հետո տեղի ունեցավ Արևմտյան Յիվրոպայում: Բագրատունյաց Հայաստանի տնտեսական բնական ու առաջագիւծ ընթացքը, ինչպես հայտնի է, շուտով ընդհատվեց թուրք-թաթարական աշխարհավեր սրշավանքների պատճառով և նրա զարգացումը յետ շարտվեց իր

աջափոր դիրքերից ու վերսկսվեց բնական տնտեսութեան դո-
ղացման հետադարձ հիմքերի վրա:

Հայաստանի քաղաքների ու տնտեսութեան բուռն ու ուժ-
ին վեկելքը 10—11-րդ դարերում, մինչև Սելջուկյան արշավանք-
ընթացքը, վոր մենք ուրվագծեցինք վերև համառոտ ու ընդհանուր
ընթացք, պետք է, իհարկե, ապագայում յենթարկվի ընդարձակ ու
սնրաքննին հետազոտութեան:

Հանրամատչելի ու հակիրճ մեր այս տեսութեանը նախա-
ատրաստական մի փորձ է միայն, վորի մեջ մենք անհրաժեշտ
ամարեցինք տալ նախնական ընդհանուր մեր գիտողութեաննե-
րը կարևորագույն այս ժամանակաշրջանի մասին:



Տեխ. խմբագիր և տրբագրիչ՝ Վ. Մ ա ն ու կ յ ա ն

Հանձնված է արտադրության 28/1 1940 թ.,
Ստորագրված է տպագրության 14/II 1940 թ.,
Դրամի լիտի լրագոր № 1698, հրատ. № 58, պատվեր № 22, արժամ 3000
ԱրմՖԱՆ-ի տպարան, Յերեան, Լենինի փ. № 67.

Пров. 1940 г.

հյուսիս
Պանաբերս

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033737

(304)

ԳԻՆԸ 3 Ռ. 50 Կ.

ЦЕНА

А II

33737